

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«___» _____ 2010թ.

N _____

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՍԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին **որոշում է.**

1. «Բնակչության հատուկ սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունը համարել վերակազմավորման ձևով վերակազմակերպված «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության՝ հաստատելով ընկերությունը վերակազմակերպելու մասին Երևանի քաղաքապետի 2010 թվականի օգոստոսի 30-ի հ. 3981-Ա որոշումը:
2. Հաստատել «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության՝
 - ա) կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
 - բ) կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգի համապատասխան իրականացնել կազմակերպության վերակազմակերպման հետ կապված անհրաժեշտ գործառնություններ և ձևակերպումներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հուղարկավորության կազմակերպումը՝ գերեզմանատների տրամադրումը, նրանց հաշվառումը, գերեզմանատների պահպանումն ու շահագործումը, իրականացվում է համայնքի ղեկավարի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության միջոցով: Երևանում հուղարկավորության կազմակերպումն իրականացվում է Երևանի քաղաքապետի կողմից՝ իր իրավասության սահմաններում:

«Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետը սահմանում է, որ համայնքն իրավունք ունի սույն օրենքով սահմանված կարգով ստեղծել համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ համայնքային կազմակերպություն): Համայնքի անունից համայնքային կազմակերպությունը ստեղծում է համայնքի ղեկավարը: Համայնքային կազմակերպության ստեղծման մասին որոշումը և կազմակերպության կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին:

Հիմք ընդունելով վերոնշյալ օրենքները՝ 2010 թվականի օգոստոսի 30-ին ընդունվել է Երևանի քաղաքապետի «Բնակչության հատուկ սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» հ.3981-Ա որոշումը, ըստ որի՝ «Բնակչության հատուկ սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպվել է «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Երևանի ավագանին որոշում է ընդունում Երևանի ենթակայության կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին:

Ելնելով վերոգրյալից նախապատրաստվել է «Բնակչության հատուկ սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Բնակչության հատուկ սպասարկում» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հավելված 1
ավագանու որոշման
Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ -----

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

--- .--- . 2010թ. թիվ ----- Ա

որոշմամբ

ՀՀ Երևանի քաղաքապետ՝

_____ Գ.Բեգլարյան

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ -----

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ

Գրանցման N -----

Վկայական N -----

«-----» ----- 2010թ.

----- Տ/Բ պետ՝

_____ -----

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԵՎԱՆ-2010թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Երևանի քաղաքապետի _____ և Երևան քաղաքի ավագանու _____ որոշումներով «Բնակչության հատուկ սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը, գրանցված ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի _____ տարածքային ստորաբաժանման կողմից, գրանցման թիվ 028266 վկայական 16.06.2010թ.: Կազմակերպությունը ստեղծվում է առանց ժամկետային սահմանափակման:

1.2 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3 Կազմակերպության հիմնադիրը Երևան համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Երևանի ավագանու (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին հանդիսանում է Երևանի քաղաքապետը, որի ենթակայությանն է հանձնվում Կազմակերպությունը:

1.4 Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5 Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

1.6 Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ, և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.7 Կազմակերպությունն ունի Երևանի զինանշանի պատկերով իր անվանմամբ կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր:

1.8 Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

1.9 Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի պարտավորությունների համար:

1.10. Կազմակերպության անվանումն է՝

Հայերեն՝ «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

Ռուսերեն՝ «Специальное обслуживание населения» общинная некоммерческая организация,

1.11 Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Արշակունյանց պողոտա 18:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կազմակերպության գործունեության առարկան և հիմնական նպատակն է՝

1) գերեզմանատներում՝ գերեզմանատեղերի տրամադրումը, հաշվառումը, թաղումների գրանցումը (թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանի վարում)։

2) Երևանի վարչական տարածքում գտնվող գերեզմանատների և դիակիզարանների շահագործման, բարելավման և պահպանման ապահովումը։

3) գերեզմանատներում բարեկարգման աշխատանքների (կանաչապատում, ոռոգման ցանց, լուսավորություն, պարսպապատում, ասֆալտապատում և այլն) իրականացումը։

4) գերեզմանի վկայականի տրամադրումը։

5) գերեզմանատների և հուղարկավորությունների վերաբերյալ տեղեկատվության պահպանումը և օրենքով սահմանված դեպքերում տեղեկատվության տրամադրումը քաղաքացիներին, պետական այլ մարմիններին։

5.1) ընթացիկ վերանորոգման աշխատանքներ գերեզմանատներում։

2.2 Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) գերեզմանահորի փորում։

2) սգո պարագաների իրացում։

3) երաժշտության ծառայության տրամադրում։

4) սգո պարագաների ծառայության տրամադրում։

5) հուղարկավորության կազմակերպման ծառայություն։

6) դիատար և այլ ավտոմեքենաների ծառայության տրամադրում։

7) դիակիզում։

8) գերեզմանի բարեկարգում (բետոնապատում և սալիկապատում)։

9) գերեզմանի խնամք

10) ֆոտո ծառայություն (լուսանկարների մեծացում, ձևավորում և այլ աշխատանքներ)։

Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար (ոչ առևտրային կազմակերպությունը) իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից։

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա։

2.3 Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով։

2.4 Համայնքային կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը։

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, դրա լիազորած համայնքային մարմինը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը։ Կազմակերպության լիազորված համայնքային մարմնի ղեկավարը, Կազմակերպության

գործադիր մարմինը, նրա տեղակալները Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

3.2 Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- ա) Կազմակերպության հիմնադրումը,
- բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
- գ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը:
- դ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
- ե) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը,
- զ) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,
- է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,
- ը) Հիմնադրի որոշմամբ ընդունվու է կազմակերպության կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանումը:

3.3 Լիազորված համայնքային մարմինը (Երևանի քաղաքապետ)՝ իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Երևանի քաղաքապետը՝

- ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,
- գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
- դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,
- ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,
- զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
- է) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

ը) իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառնություններ:

3.4 Կազմակերպության գործադիր մարմինը.

ա) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված համայնքային մարմինը՝ Երևանի քաղաքապետը: Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, Հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

բ) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է լիազորված համայնքային մարմնի ղեկավարը՝ Երևանի քաղաքապետը:

գ) Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

դ) Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար:

ե) Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, լիազորված համայնքային մարմնի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չեն կարող ենթարկվել պատասխանատվության:

3.5 Կազմակերպության տնօրենը՝

ա) կազմակերպության տնօրեն կարող է նշանակվել ՀՀ այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի բարձրագույն կրթություն.

բ) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

գ) ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

դ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

ե) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր,

զ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

է) կատարում աշխատանքի բաշխում տեղակալների միջև,

ը) սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

թ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ժ) ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում լիազորված համայնքային մարմին,

ժա) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

IV ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

4.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

4.3 Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

4.4 Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

4.5 Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

4.6 Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են Հիմնադրի սեփականությունը:

4.7 Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

4.8 Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

4.9 Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն է հանդիսանում ՀՀ պետական և Երևանի բյուջեներից հատկացումները վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցներից, իրավաբանական և ֆիզիկական անձանց

կամավոր ներդրումներից և հանգանակություններից, տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների տրամադրած դրամաշնորհներից:

Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում են նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդ:

4.10 Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Հիմնադրի կողմից լիազորված համայնքային մարմինը:

4.11 Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

V ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

5.2 Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

VI ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1. Համայնքային Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Համայնքային Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

6.2 Համայնքային Կազմակերպությունը լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է Երևանի բյուջե:

6.3 Համայնքային Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

Հաստատված է

«Բնակչության հատուկ սպասարկում» ՓԲԸ-ի

ՏՆՕՐԵՆ՝

Վ. Սուքիասյան

Կ.Տ

Հաստատված է

«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի

ՏՆՕՐԵՆ՝

Վ. Սուքիասյան

Կ.Տ

«---» ----- 2010թ,

«---» ----- 2010թ,

«Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցվող (հանձնվող) «Բնակչության հատուկ սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշիռի մնացորդները 01.08.2010թ. դրությամբ

«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ–ը հանդիսանում է «Բնակչության հատուկ սպասարկում» ՓԲԸ-ի իրավահաջորդը, որին փոխանցվում են «Բնակչության հատուկ սպասարկում» ՓԲԸ-ին պատկանող և սույն փոխանցման ակտում նշված ակտիվները և պասիվները, այլ իրավունքներն ու պարտավորությունները:

հազ.դրամ			
ԱԿՏԻՎ		ՊԱՍԻՎ	
I. Ոչ ընթացիկ ակտիվներ՝ այդ թվում՝		III. Սեփական կապիտալ, այդ թվում՝	
Հիմնական միջոցներ /հավելված 1,2,3,10/	21510,9	Կուտակված շահույթ	279983,0
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ (ամրացված գույք) /հավելված 9/	79819,5		
Ոչ նյութական ակտիվներ	313,3		
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	101643,7	Ընդամենը սեփական կապիտալ	279983,0
II. Ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝		V. Ընթացիկ պարտավորություններ՝ այդ թվում՝	
Նյութեր /հավելված 7/	7839,4	Կրեդիտորական պարտքեր գնումների գծով /հավելված 5/	92,3
Ապրանքներ /հավելված 7/	3491,0	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին /հավելված 5/	33955,6
Արագամաշ առարկաներ /հավելված 7/	990,3	Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով /հավելված 8/	4585,0
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով / հավելված 4/	6025,4	Այլ կրեդիտորական պարտքեր /հավելված 5/	85,7
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ /հավելված 6/	195247,4	Ընդամենն ընթացիկ պարտավորություններ	38718,6
Այլ դեբիտորական պարտքեր /հավելված 4/	3464,4		
Ընդամենն ընթացիկ ակտիվներ	217057,9		
ՀԱՇՎԵԿՇԻՌ	318701,6	ՀԱՇՎԵԿՇԻՌ	318701,6

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀՈԱԿ-ԻՆ ԵՆ ՓՈԽԱՆՑՎՈՒՄ (ՀԱՆՁՆՎՈՒՄ)

«Բնակչության հատուկ սպասարկում» ՓԲԸ-ի հաշվեկշռում ընդգրկված հիմնական միջոցները, նյութերը, արագամաշ առարկաները, դրամական միջոցները, դեբիտորական, կրեդիտորական պարտքեր (հաշվեկշռից հաշվեկշիռ սկզբունքով), արտահաշվեկշռային հաշիվները հետևյալ ցուցանիշներով (01.08.2010թ. դրությամբ):

1. «Բնակչության հատուկ սպասարկման» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռում ընդգրկված սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցները

հազ.դրամ

h/h	Անվանումը	Սկզբնական արժեք	Հաշվեկշռային արժեք
1	Մեքենաներ և սարքավորումներ / հավելված 1/	3879,7	2814,5
2	Արտադրա-տնտեսական գույք / հավելված 2/	15812,0	6327,8
3	Այլ հիմնական միջոցներ /հավելված 3/	4600,0	3373,3
4	Տրանսպորտային միջոցներ /հավելված 10/	30922,9	8995,3
	ԸՆԴԱՄԵՆԸ	55214,6	21510,9

2. «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող նյութերը /արագամաշ առարկաները/

հազ.դրամ

h/h	Անվանումը	Գումարը
1	Նյութեր, ապրանքներ, արագամաշ առարկաներ /հավելված 7/	12321

3. «Բնակչության հատուկ սպասարկման» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռում ընդգրկված ամրացված գույքը

հազ.դրամ

h/h	Անվանումը	Սկզբնական արժեք	Հաշվեկշռային արժեք
1	Շենք, շինություններ /հավելված 9/	6052,3	2457,1
2	Կառուցվածքներ /հավելված 9/	100913,8	77362,4
	ԸՆԴԱՄԵՆԸ	106966,1	79819,5

4. «Բնակչության հատուկ սպասարկման» փակ բաժնետիրական ընկերության գույքի և պարտավորությունների բոլոր իրավասությունները՝ այդ թվում վիճարկվող պարտավորությունները:

5. «Բնակչության հատուկ սպասարկման» փակ բաժնետիրական ընկերության՝

- Տնտեսական գործառնության փաստը հաստատող և հաշվապահական գրառումների համար հիմք հանդիսացող
- 5,1 սկզբնական փաստաթղթեր /դրամարկղային, բանկային փաստաթղթեր, բանկերի քաղվածքներ, աշխատանքային կարգագրեր, տաբելներ/:
- 5,2 Հիմնական միջոցների հաշվառման գույքային քարտեր և գրքեր
- 5,3 Հաշվապահական ռեգիստրներ /գլխավոր գիրք, մատյան օրդերներ/
- 5,4 Հաշիվների, դրամարկղային օրդերների, լիազորագրերի , վճարման հանձնարարագրերի և այլ փաստաթղթերի գրանցման մատյաններ:
- 5,5 Հիմնական միջոցների մաշվածության որոշման ակտեր, տեղեկագրեր:
- 5,6 Պայմանագրեր /տնտեսական գործնական, աշխատանքային և այլն/, անձնակազմի անձնական գործեր:
- 5,7 Կնիքը, կանոնադրությունը --- թերթ և այլ փաստաթղթեր:

Հանձնող

Ընդունող

ՏՆՕՐԵՆ՝

Վ. Սուքիասյան

ՏՆՕՐԵՆ՝

Վ. Սուքիասյան

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՇ՝

Ա. Աբրահամյան

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՇ՝

Ա. Աբրահամյան

Կ.Տ

Կ.Տ

«Բնակչության հատուկ սպասարկման» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության
իրավունքով պատկանող մեքենա-սարքավորումները

դրամ

h/h	Հիմնական միջոցի անվանումը	Ձեռքբերման տարեթիվը	Քանակը	Սկզբնական արժեքը	Հաշվեկշռային արժեքը
1	Տրակտոր Բելառուս Շահումյան	հատ	1	95735	0
2	Ազդանշանային սարք Արշակունյաց 18	հատ	1	484000	64533
3	Հողաքանդիչ կոմպրես. ԶԻՖ-55	հատ	1	3300000	2750000
	ԸՆԴԱՄԵՆԸ		3	3879735	2814533

ՏՆՕՐԵՆ՝

Վ. Սուքիասյան

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝

Ա. Աբրահամյան

Կ.Տ

«Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող արտադրա-տնտեսական գույքը

դրամ

h/h	Հիմնական միջոցի անվանումը	Ձեռքբերման տարեթիվը	Քանակը	Սկզբնական արժեքը	Հաշվեկշռային արժեքը
1	Հեռուստացույց JVC	2001	1	148900	0
2	Հեռուստացույցի տակդիր	2001	1	37000	0
3	Գորգ մեծ 3x4	2007	1	60000	19000
4	Բջջ. հեռ. NOKIA 6300	2007	1	105000	49000
5	Բազմոց երկտեղանոց	2004	1	70700	0
6	Տեսամագնիստոֆոն JVC	2003	1	50200	0
7	Մինի ԱՏԱ	2002	1	438700	0
8	Գեղանկար	2002	3	180000	0
9	Գրասենյակային աթոռ	2002	2	46200	0
10	Կոնդիցիոներ AIRFEL	2007	5	707500	271209
11	Հեռ. PANASONIC	2007	1	20000	0
12	Հեռ. PANASONIC	2007	1	35000	0
13	Սեղան դիմադիր	2007	2	258000	103200
14	Բազկաթոռ	2007	1	60000	24000
15	Զգեստապահարան	2007	1	127400	51007
16	Պատ պահարան դռներով	2007	1	250000	116667
17	Պատ պահարան առանց դռների	2007	1	230000	199333
18	Գրասեղան	1997	1	57000	0
19	Գրասեղան	2001	2	67500	0
20	Գրասեղան	2003	1	52000	0
21	Գրասեղան	2003	4	112000	0
22	Գրասեղան	2003	1	56850	0
23	Գրապահարան	2001	2	106080	0
24	Գրապահարան	2002	4	201600	0
25	Գրապահարան	2003	1	56730	0
26	Բազկաթոռ	2005	1	61800	2060
27	Երկաթյա պահարան	1997	7	105000	0
28	Չիրկիզվող պահարան	1974	1	25000	0
29	Երկաթյա պահարան	1997	1	12000	0
30	Հեռախոսի ապարատ	2004	1	24252	0
31	Համակարգ. մոնիտոր SAMS.551	2003	1	499740	0
32	Պրիմտեր LY-1000	2003	2	320880	0
33	Համակարգ. մոնիտոր SAM.793DF	2003	1	459000	0
34	ՀՂՄ ապարատ ЭРИКА МИКРО	2002	1	96000	0
35	Էլ. եներգիայի հաշվիչ	2003	1	23690	0
36	Ծալովի սեղան	2003	1	46400	0
37	Մետաղյա բաք	2005	1	200000	6633
38	Աղբարկղ	2005	1	69000	0
39	Համակարգիչ P IV 3200 P 800	2005	1	490428	0
40	Համակարգիչ P IV 3200 VPMXO	2005	1	475000	0
41	Մոնիտոր SAMSUNG 17 V	2005	2	147250	0
42	Պրիմտեր CANON LBP 1120	2005	1	106241	0
43	Պրիմտեր HP LASENT 1010	2005	1	89760	0
44	Բազկաթոռ	2006	1	140000	37333
45	Գրասեղան	2006	1	36000	2400
46	Գրասեղան	2006	2	115000	30667
47	Գրասենյակային աթոռ	2006	4	43000	11467

48	ՀԴՄ ՄԻՆԻԿԱ 1102Փ	2006	1	75000	12500
49	Համակարգիչ P IV 3200	2006	1	474281	51610
50	Պրինտեր CANON LBP 1120	2006	1	93450	24920
51	Սոնիտոր SAMSUNG 7930	2006	1	56875	15167
52	Անխափան սնուց. սարք UPS 600 VA	2006	1	17100	0
53	Գազօջախ BEKO	2008	1	129500	60433
54	Օդափոխիչ BEKO	2008	1	35000	16333
55	Հեռուստացույց BEKO	2008	1	317000	147933
56	Հեռուստացույցի տակդիր	2008	1	70500	34075
57	DVD SAMSUNG	2008	1	49300	23829
58	Հեռուստացույց SAMSUNG	2008	1	77000	39783
59	Թղփադրամ ստուգող սարք	2008	1	45000	23250
60	Մետաղյա աղբարկղ	2008	20	760000	405334
61	Տպիչ EPSON	2008	1	177000	100300
62	Գրասեղան մեծ	2008	1	48000	28800
63	Բազկաթոռ	2008	1	25000	15000
64	Վինտյատոր	2008	1	10000	6000
65	Համակարգիչ P IV LG	2008	1	261600	156960
66	Տպիչ LG HP Iasept P 1005	2008	1	50400	30240
67	Անխափան սնուց. սարք UPS 600 VA	2008	1	24000	0
68	Սոնիտոր LG	2008	1	84000	50400
69	Երկաթյա ստեյպ	2008	3	195000	120250
70	Պատ պահարան դռներով միջ.	2008	1	150000	92500
71	Համակարգչի սեղան	2008	2	100000	58334
72	Ցուցատախտակ 100x71 սմ.	2008	1	30000	0
73	Ցուցատախտակ 71x40 սմ.	2008	20	480000	296000
74	Գրասեղան մեծ- սիլիկ.	2008	1	46200	28490
75	Մետաղական աթոռ- սիլիկ.	2008	5	52250	32221
76	Բազկաթոռ- սիլիկ.	2008	1	25300	15602
77	Բազմոց փափուկ- սիլիկ.	2008	1	77000	47483
78	Պահարան- սիլիկ.	2008	1	44000	27133
79	Ցերեկային լույս	2008	5	81000	0
80	Ցերեկային լույս	2008	7	59605	0
81	Ցերեկային լույս	2008	1	4800	0
82	Լվացարան տումբա	2008	1	47000	29766
83	Բացովի լրագրասեղան	2008	1	63000	39900
84	Հեռախոս	2008	1	8280	0
85	Հեռախոս	2008	1	9000	0
86	Ցերեկային լույս	2008	4	28320	0
87	Աղբարկղ	2008	22	968000	645333
88	Գազի բալոն 1.6 խմ 80լ	2009	2	493776	329184
89	Գազի բալոն 1.3 խմ 60լ	2009	1	227014	151343
90	Ղուցատախտակ 0.9x0.6	2009	1	22000	0
91	Ջրի ապարատ USS 20	2009	1	59600	40726
92	Գրանիտի ցուցատախտակ 1.1x0.5	2009	1	144000	105600
93	Բջջ. հեռ. Nokia	2009	1	90000	67500
94	Հեռախոս	2009	3	49500	37125
95	Բջջ. հեռ. Nokia	2009	1	55000	42167
96	Բջջ. հեռ. SAMSUNG	2009	1	80000	65333
97	Պրինտեր	2009	1	150000	122500
98	Գրասենյակ. աթոռ	2009	40	540000	441000
99	Գրասեղան	2009	1	72000	58800
100	Բջջ. հեռ. SAMSUNG	2009	1	120000	100000
101	Գորգ	2009	1	90000	75000
102	Համակարգչի բազկաթոռ	2009	1	28000	23767

103	Անշարժ բազկաթոռ	2009	1	18000	15300
104	Գրասենյակ. աթոռ	2009	10	100000	84997
105	Հեռախոս	2009	1	35000	29733
106	Գրասեղան	2009	2	64000	54400
107	Հյուճաքամիչ	2010	1	38000	33567
108	Բջջ. հեռ. Nokia	2010	1	110000	106333
109	Գրասեղան մեծ	2010	1	75000	72500
110	Գրասեղանի կողքի տումբա	2010	1	40000	38667
111	Բջջ. հեռ. Nokia	2010	1	110000	106333
112	Գրասեղան փոքր	2010	1	35000	33833
113	Փայտից աթոռ	2010	1	12000	11600
114	Սառնարան փոքր LG	2010	1	149000	144033
115	Բազկաթոռ.	2010	1	150000	150000
116	Գրասեղան մեծ	2010	1	87000	87000
117	Բազկաթոռ	2010	2	80000	80000
118	Վեճնտիլատոր	2010	1	19550	19550
	ԸՆԴԱՄԵՆԸ		278	15812002	6327746

ՏՆՕՐԵՆ՝

Վ. Սուքիասյան

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝

Ա. Աբրահամյան

Կ.Տ

«Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող այլ հիմնական միջոցները

դրամ

h/h	Հիմնական միջոցի անվանումը	Ձեռքբերման տարեթիվը	Քանակը	Սկզբնական արժեքը	Հաշվեկշռային արժեքը
	Ջեռուցման համակարգ Արշակունյաց 18	2007	1	4600000	3373333
	ԸՆԴԱՄԵՆԸ		1	4600000	3373333

ՏՆՕՐԵՆ՝

Վ. Սուքիասյան

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝

Ա. Աբրահամյան

Կ.Տ

«Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը պատկանող դեբիտորական պարտքերը

դրամ

h/h	Պարտապանի անվանումը	Բովանդակությունը	Գումարը
1	Սպանդարյան 1 Հ.Տ. Բյուջե	Հարկային պարտավորությունների կանխավճար	5997908,0
2	Կենտրոն վարչական շրջան	Հողի հարկ	27500,0
	ԸՆԴԱՄԵՆԸ		6025408,0
3	Կենտրոն վարչական շրջան		158450,0
4	Արաբկիր վարչական շրջան		73900,0
5	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան		147820,0
6	Շենգավիթ վարչական շրջան		176950,0
7	Աջափնյակ վարչական շրջան		382800,0
8	Ավան վարչական շրջան		-14800,0
9	Նուբարաշեն վարչական շրջան		117800,0
10	Նոր Նորք վարչական շրջան		32000,0
11	Դավթաշեն վարչական շրջան		26900,0
12	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան		351200,0
13	Նորք-Մարաշ վարչական շրջան		502900,0
14	Էրեբունի վարչական շրջան		61300,0
15	Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	Զարենց Արփենիկ - Կառավարական հուղարկավորություն	272050,0
16	Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	Դավլաթյան Նինել - Կառավարական հուղարկավորություն	292900,0
17	Ա. Խաչատրյան համերգասրահ	Հերունի Պարիս - Կառավարական հուղարկավորություն	546450,0
18	Ա. Խաչատրյան համերգասրահ	Էմիլ գաբրիելյան - Կառավարական հուղարկավորություն	230900,0
19	Ա. Խաչատրյան համերգասրահ	Նիկողայոսյան-Մուրադյան Հրաչ - Կառավարական հուղարկավորություն	92900,0
20	Ա.Զ. <<Ժ.Հովհաննիսյան>>	արենդավճար հուլիս 2010թ.	12000,0
	ԸՆԴԱՄԵՆԸ		3464420,0

ՏՆՕՐԵՆ՝

Վ. Սուքիասյան

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝

Ա.Արքահամյան

Կ.Տ

«Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը պատկանող կրեդիտորական պարտավորությունները

դրամ

h/h	Պարտատիրոջ անվանումը	Բովանդակությունը	Գումարը
1	Սպանդարյան 1 Հ.Տ. Բյուջե	Հարկային պարտավորություն	33858092,0
2	Կենտրոն վարչական շրջան	Գույքահարկ	97500,0
	ԸՆԴԱՄԵՆԸ		33955592,0
3	Արհկոմ	Աշխատավարձին 1 %	85715,0
	ԸՆԴԱՄԵՆԸ		85715,0
4	Թիվ 1 տուն ինտերնատ	Կանխավճար	89247,0
5	Նորքի տուն ինտերնատ	Կանխավճար	8,0
6	Քրեակատարողական հիվանդանոց	Կանխավճար	3100,0
	ԸՆԴԱՄԵՆԸ		92355,0

ՏՆՕՐԵՆ՝

Վ. Սուքիասյան

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝

Ա.Աբրահամյան

Կ.Տ

«Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը պատկանող դրամական միջոցները

հազ. Դրամ

h/h	Անվանումը	Բանկի անվանումը	Գումարը
1	Ազգային արժույթի դրամարկդ		2031,6
2	Հաշվարկային հաշիվ	<<Արարատբանկ>> ԲԲԸ	189065,6
3	Հաշվարկային հաշիվ	<<Ինտերբանկ>> ՓԲԸ	977,0
4	Հաշվարկային հաշիվ	<<Ամերիաբանկ>> ԲԲԸ	1118,6
5	Հաշվարկային հաշիվ - Սառեցված	Կրեդիտ Երևանբանկ	2054,6
	ԸՆԴԱՄԵՆԸ		195247,4

ՏՆՕՐԵՆ՝

Վ. Սուքիասյան

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝

Ա. Աբրահամյան

Կ.Տ

«Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող նյութերը /արագամաշ առարկաները/

դրամ

h/h	Անվանումը	Միավորի գինը	Քանակը /հատ/	Գումարը
1	Դագաղ շպոն	28000	68	1904000
2	Դագաղ սև կտոր	23000	69	1587000
	ԸՆԴԱՄԵՆԸ		137	3491000
3	Վառելիք	355	189,1	67131
4	Մետաղյա ցուցանակ	2190	3365	7369350
5	Կադիլլակ ա/մ-ի արգելակման դեմի կալոդկա	20000	1	20000
6	Կադիլլակ ա/մ-ի տակի շառավո	15000	3	45000
7	Կադիլլակ ա/մ-ի տակի ռազատկա ռազվալի ֆիլտր	25000	2	50000
8	Կադիլլակ ա/մ-ի բենզինի ֆիլտր	2000	2	4000
9	Կադիլլակ ա/մ-ի կարոբկի ֆիլտր	10000	2	20000
10	Կադիլլակ ա/մ-ի ստարտերի -----	15000	2	30000
11	Կադիլլակ ա/մ-ի ստարտերի ավտոմատ	15000	2	30000
12	Կադիլլակ ա/մ-ի դինամոյի ռելե	3000	1	3000
13	Կադիլլակ ա/մ-ի դինամոյի ածուխ	800	3	2400
14	Կադիլլակ ա/մ-ի տրամլորի կափարիչ	5500	1	5500
15	Կադիլլակ ա/մ-ի ինդուկցիոն կոճ	15000	1	15000
16	Կադիլլակ ա/մ-ի դեմի արգելակման բաշոկի սալնիկ	1000	2	2000
17	Կադիլլակ ա/մ-ի դեմի արգելակման խողովակ	8000	1	8000
18	Կադիլլակ ա/մ-ի կարդանի կրեստավինա	10000	2	20000
19	Կադիլլակ ա/մ-ի ապահովիչ	150	60	9000
20	Կադիլլակ ա/մ-ի հետևի ֆարի ապակի	2000	2	4000
21	Կադիլլակ ա/մ-ի դեմի ֆար	20000	3	60000
22	Կադիլլակ ա/մ-ի շարժիչի բարձիկ	2500	1	2500
23	Կադիլլակ ա/մ-ի շարժիչի յուղի ֆիլտր	5500	5	27500
24	Կադիլլակ ա/մ-ի արգելակման վակոււմ	45000	1	45000
	ԸՆԴԱՄԵՆԸ		3651,1	7839381
25	Բանվորական ամառային բատինկա	9000	4	36000
26	Բանվորական ամառային արտահագուստ	8000	1	8000
27	Բանվորական ձմեռային արտահագուստ	12000	9	108000
28	Բանվորական ամառային արտահագուստ	15750	39	614250
29	Գրանցամատյան	7000	32	224000
	ԸՆԴԱՄԵՆԸ		7661,2	990250

ՏՆՕՐԵՆ՝

Վ. Սուքիասյան

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝

Ա. Աբրահամյան

«Բնակրության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը պատկանող աշխատավարձի գծով պարտքեր

դրամ

h/h	Անուն, Ազգանուն	Հաստիքի անվանումը	Վճարման ենթակա աշխատավարձ և այլ վճարներ
1	Ռաֆիկ Քոչարյան	բանվոր	46150
2	Տիգրան Հայրապետյան	բանվոր	275
3	Սելվակ Կատվայան	հսկիչ	54780
4	Հովսեփ Աբրահամյան	բանվոր	46150
5	Արայիկ Ենգիբարյան	բանվոր	46150
6	Արամայիս Ենգիբարյան	բանվոր	3452
7	Նորայր Առաքելյան	բանվոր	46150
8	Մերուժան Խաչատրյան	բանվոր	46150
9	Վասիլի Գասպարյան	բանվոր	3452
10	Վահագն Մովսիսյան	բանվոր	3452
11	Կարապետ Մաջարյան	բանվոր	46150
12	Համլետ Գևորգյան	բանվոր	46150
13	Ռազմիկ Զաքարյան	գեղեգիր	164999
14	Գառնիկ Սողոմոնյան	հսկիչ	54780
15	Հենրիկ Մարտիրոսյան	բանվոր	46150
16	Տիգրան Մարգարյան	բանվոր	46150
17	Գագիկ Թամրազով	բանվոր	34068
18	Ռուբիկ Սմբատյան	վարիչ	63410
19	Ժիրայր Ալիխանյան	բանվոր	46150
20	Լևոն Հարությունյան	հսկիչ	54780
21	Վասիլ Աֆյան	վարիչ	56161
22	Գագիկ Արմենակյան	հսկիչ	54780
23	Մամիկոն Մարգարյան	բանվոր	46150
24	Մերոժ Հակոբյան	վարիչ	63410
25	Արմենակ Պետրոսյան	բանվոր	46150
26	Ռոբերտ Զարգարյան	բանվոր	46150
27	Սուրիկ Մկոյան	բանվոր	46150
28	Սիրեկան Սարգսյան	բանվոր	46150
29	Խաչիկ Պապիկյան	բանվոր	3452
30	Միսակ Թումիկյան	վարիչ	78944
31	Արտակ Գալստյան	հսկիչ	54780
32	Գագիկ Հովհաննիսյան	բանվոր	46150
33	Արթուր Հովհաննիսյան	հսկիչ	54780
34	Դանիել Գրիգորյան	բանվոր	46150
35	Վարդան Շաբոյան	բանվոր	3452
36	Գագիկ Պապիկյան	բանվոր	3452
37	Արամայիս Գևորգյան	վարիչ	63410
38	Անդրանիկ Իսաիրյան	բանվոր	46150
39	Անդրեյ Ղուլյան	վարիչ	63410
40	Ռուբեն Շաբոյան	բանվոր	3452
41	Հովհաննես Հավհաննիսյան	հսկիչ	54780
42	Մամվել Մանուկյան	բանվոր	46150
43	Սոս Բեգլարյան	հսկիչ	9216
44	Մնացական Մարգարյան	բանվոր	3452
45	Հարություն Ճուղուրյան	հսկիչ	54780

46	Ռուստամ Քալաշյան	բանվոր	46150
47	Տիգրան Գալստյան	հսկիչ	54780
48	Հակոբ Ֆեռոյան	վարիչ	63410
49	Կամո Չոբանյան	բանվոր	46150
50	Վրեժ Մելքոնյան	բանվոր	46150
51	Հարություն Սինանյան	վարիչ	63410
52	Ռազմիկ Սարգսյան	բանվոր	46150
53	Նելսոն Ստեփանյան	հսկիչ	54780
54	Ալբերտ Իսրայելյան	բանվոր	46150
55	Գառնիկ Մելքոնյան	բանվոր	46150
56	Հակոբ Հարությունյան	բանվոր	46150
57	Զարե Գասեսյան	բանվոր	46150
58	Արսեն Մկրտչյան	բանվոր	46150
59	Վաչագան Սամվելյան	բանվոր	46150
60	Ավետիս Զաթալյան	բանվոր	46150
61	Պողոս Գազիսյան	բանվոր	46150
62	Վաղինակ Մկրտչյան	վարիչ	63410
63	Կարեն Խաչատրյան	հսկիչ	54780
64	Գրիշա Հունանյան	հսկիչ	54780
65	Գազիկ Ղազարյան	վարիչ	63410
66	Զարիկ Իսաիրյան	բանվոր	46150
67	Արամայիս Ասատրյան	բանվոր	3452
68	Հարություն Մովսեսյան	բանվոր	46150
69	Հայկազ Գաբրիկյան	բանվոր	46150
